

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կենդանեաց Բաժանումը :

ԿԵՆԴԱՆԵԱՅ ազգը՝ կը բաժնուի՝ դաս, կարգ, ցեղ և տեսակ¹, որպէս զի ամէն մէկ կենդանին ինչ մասնաւոր յատկութիւններ որ ունի՝ որոշ իմացուի. վասն զի աս յատկութիւններն ուրիշ կերպով չենք կրնար գիւրաւ ըմբռնել, բայց եթէ ամէն մէկ խումբը զանազան ցեղեր բաժնելով՝ Ո՛ր և իցէ կենդանւոյ մը յատկութիւնները քննելով՝ կրնանք իմանալ թէ՛ որ կարգին կամ ցեղին տակը կ'երթայ, և անով կրնանք գիւրաւ բացատրել իրեն բնութիւնն ու յատկութիւնները: Օճարմանալին աս է որ բոլոր կենդանեաց ազգը մէկտեղ առնելով՝ կը տեսնենք որ ամէն ալ մէկ սկիզբէ մը առաջ եկած՝ իրարու հետ կապակցութիւն ունին: Ուստի բնական պատմութիւնը գործիւաւոր՝ մարմնոց ու հանքաց վըայ կը խօսի. իսկ կենդանաբանութիւնը կը սորցընէ թէ միայն բոլոր կենդանիները առնելով՝ ինչ կապակցութիւն ունին իրարու հետ. և թէ կենդա-

1 Եւրոպացիք առհասարակ Խափառութիւն (Գղ. règne) ըսելով կը հասկնան բոլոր կենդանիները կամ բոլոր բոյսերը կամ հանքերը մէկտեղ առած. անոր համար ալ բնական պատմութիւնը իրեք մաս կը բաժնեն, այսինքն թագաւորութիւն կենդանեաց, թագաւորութիւն բուսոց, թագաւորութիւն հանքաց: Կոյն բառը մեր մէջ յեղափոխուի ալ թարգմանուած կայ. բայց մենք լաւ համարեցանք անոնց տեղը ազգ բառը գործածել:

2 Կարգ, Ordre. Դաս, Classe. Ցեղ, Genre. Տեսակ, Espèce.

3 Գղ. Organique բառին գործիւոր գրինք՝ աւելի քաղցրահնչիւն ըլլալուն և մեր նախնեաց մէջ գտնուելուն համար, թէպէտ ուրիշ տեղ գործարանուող ալ թարգմանուած է:

Իսկ գործիւաւոր կ'ըսուին կենդանիներն ու բոյսերը, որովհետեւ մեծնալու և իրենց կենսական գործքերը կատարելու համար մասնաւոր գործիք կամ գործարաններ ունին. ինչպէս կենդանիք հինգ զգայարանք, բոյսերն ալ արմատ, ճիւղ, տերև, ծաղիկ, պտուղ և այլն: Իսկ հանքերը աս տեսակ գործարաններէ զուրկ ըլլալուն՝ գործիւաւոր մարմին չեն ըսուիր:

նեաց ներսի ու դրսի յատկութիւնները ինչով կը տարբերին իրարմէ: Եթէ կը հետեւի թէ երբոր անծանօթ կենդանւոյ մը մէկ ոսկորը գտնենք, աս ուսմունքով կրնանք իմանալ թէ ան կենդանին ինչ տեսակ է. և անդամազննական օրէնքներով ալ կըրնանք որոշել թէ ինչ մեծութիւն և յատկութիւն ունեցած պիտի ըլլայ:

Քիւլիէ անուանի բնագէտը բոլոր կենդանիները չորս խումբ՝ կը բաժնէ՝ իրենց ապրելու կերպին, և իրենց մարմնոյն կազմուածքին նայելով. այսինքն Ողնաւոր², Կակղամիս³, Յօդաւոր⁴ և Նաւագայթաձև⁵:

ԽՈՒՄԲ ԱՌԱՋԻՆ

Ողնաւոր կենդանիներ:

Ողնաւոր կենդանիները չորս դաս կը բաժնուին, որ են Կաթնտու⁶, Թռչուն⁷, Սողուն⁸ և Ձուկ⁹. և քսանրութը կարգ, ցի

ԴԱՍ Ա. ԿԱԹՆՏՈՒՆ	Երկձեռնի	Bimanes.
	Քառաձեռնի	Quadrumanes.
	Մսակեր	Carnassiers.
	Պարկաւոր	Marsupiaux.
	Կրծող	Rongeurs.
	Անատամն	Édentés.

ԴԱՍ Բ. ԹՈՂՈՒՆ	Գիշատիչ կամ յափշտակիչ	Rapaces.
	Ճնճղուկ	Passereaux.
	Մագլցող	Grimpeurs.
	Հաւ	Gallinacés.
	Մերկասրունք	Échassiers.
	Մաշկոտն	Palmipèdes.

ԴԱՍ Գ. ՍՈՂՈՒՆ	Կրիայ	Chéloniens.
	Մողես	Sauriens.
	Օձ	Ophidiens.

	Գորտ	Batraciens.
--	------	-------------

- | | |
|------------------|------------------|
| 1 Գղ. Groupe. | 6 Գղ. Mammifère. |
| 2 Գղ. Vertébré. | 7 Գղ. Oiseau. |
| 3 Գղ. Mollusque. | 8 Գղ. Reptile. |
| 4 Գղ. Articulé. | 9 Գղ. Poisson. |
| 5 Գղ. Rayonné. | |

ԴՅՍ Դ. ՁՈՒԿ	Փշաթև	Acanthopterygiens.
	Պորտաթև	Abdominaux.
	Լանջաթև	Subrachiens.
	Անոտն	Apodes.
	Ծովաձի	Lophobranches.
	Կցածնոտ	Plectognates.
	Մեռինէս	Sturioniens.
	Շանաձուկն	Sélaciens.
	Բոլորաբերան	Cyclostomes.

Իս բաժանման մէջ ամէն ողնաւոր կենդանիք կը բովանդակին . որով ամէնուն կազմուածքը և ընդհանուր յատկութիւնները տեղն'ի տեղը կրնան ստորագրուիլ :

Ողնաւոր կենդանեաց կազմուածքը՝ շարժուն ոսկորի կտորուանքներէ բաղկացած է , կմխքնին խոռոչաւոր է , և մարմնոյն մէջ է իրենց փորոտիքը : Իս խոռոչիս կենդանիներն ունին գանկ , իրան և զոյգ անդամներ , և ողնայար՝ որուն մէջէն գլխուն ըղեղը հաղորդած է բոլոր ջղերուն հետ . արիւննին կարմիր է , որ այլ և այլ երակներէ անցնելով՝ բոլոր մարմնոյն մէջ շրջան կ'ընէ : Սնդեան գործարանքները պարզ չեն . երկու ծամելիք ունին միշտ վրայէ վրայ կամ քովէ քով . ունին նաև լորձուների անօթ , լերդ , ստամոքս , փայծաղն , և երիկամունք :

Ողնաւոր կենդանեաց չորս դասերուն վրայ ալ հարկ է որ հոս մէյմէկ քիչ տեղեկութիւն տանք :

Դաս Ա. Կաթնասուն :

Կաթնատու կենդանիները (որ կենդանածին ալ կ'ըսուին) ուրիշներէն ասով կը տարբերին որ ձագերնին կաթով կը մեծցընեն . արիւննին թրուչուններուն արեանը պէս մասնաւոր տաքութեան աստիճան ունի . սրտերնին երկու բաժնուած է , իսկ արեան երակները թոքերնուն վրայ պատած են , բայց շնչերակներուն հետ ոչ երբէք կը խառնուին , և իրենց արեան շրջանը կատարեալ է : Իս կենդանիները ամէն ալ օդով կը սնանին , և օդը շնչաւութեամբ միայն կ'երթայ թոքը , ու ոչ երբէք մարմնոյն մէջ կը տա-

րածուի : Իսոնց արեան գնտակները՝ կըր են . (որ մէկալ ողնաւոր կենդանիներուն արեան մէջի գնտակները ձուած են .) մորթերնին մազոտ :

Իս դասը ինը կարգ կը բաժնուի , ինչպէս որ վերի տախտակին վրայ ցուցցինք . և ամէն մէկուն տակն ալ անհամար կենդանիներ կ'իյնան . ասոնք ալ այլևայլ ցեղեր ու տեսակներ կը բաժնուին՝ իրենց այլևայլ յատկութեանցը համեմատ :

Դաս Բ. Թռչուն :

Իսոնք ալ օդ ծծելով կը սնանին , բայց թոքերնին երկու բաժնուած չէ : Իս է զարմանալին որ շնչաւութեամբ օդը թոքերնին մտնելէն ետքը , անկէ կը տարածուի կուրծքին՝ փորուն՝ ոսկորներուն և մարմնոյն ուրիշ գործարաններուն մէջ : Իսկ իրենց արեան շրջանը կենդանածիններուն պէս է , բայց անոնց արիւնէն աւելի տաք է , և արեան գնտակները ձուած են . ըստամոքսնին իրեք բաժնուած է , և խիստ ջղոտ . մանաւանդ անոնց որ ընդեղէնով կ'ապրին : Հաւկիթ ածելէն առաջ իրենց բոյն կը շինեն խուիւներով ու կաւով . ձագերնին հաւկիթի վրայ թուխս նստելով կը հանեն . իսկ ոմանց ձագը տաք երկիրներուն մէջ առանց մօրը թխսելուն ալ կ'ելէ , ինչպէս է ջայլամինը¹ : Սարմիննին փետրով ծածկած է , ու տարին երկու անգամ փետուրնին կը փոխեն . թւերնին ուսերնուն վրայ եղած երկայն ոսկորներուն հետ կապած է , և վրանին մատի պէս կտրտուածք կ'երենայ : Ստուրնին ընդհանրապէս չորս մատով է . ասոնցմէ իրեքը դէպ'ի առջև դարձած են , մէկ հատն ալ դէպ'ի ետև . իսկ ձայն հանելու համար շնչերնին մասնաւոր գործարաններով կը պտըտի , ու ետքը հագագէն դուրս կ'ելէ :

Իս դասն ալ կը բաժնուի վեց կարգ :

¹ Տես օրագրիս Ա. հատորին 273 երեսը :

² Տե՛՛ն Գո՛ւն :

ԳԽԱՍ Գ. Սողոմոն :

Եւ կարգի կենդանիներն ալ՝ կենդանածիններուն ու թռչուններուն պէս օդով կը սնանին, և իրենց ձագերը հաւկըթով կը ծնանին . բայց իրենց արեան շրջանը անկատար է, և տաքութիւնն ալ օդին տաքութեանը հաւասար է, անոր համար ձկներուն պէս պաղարիւն կը սեպուին : Ստամոքսնին մէկ է, և մարմնոյն մէջի եղած բոլոր արիւնը թոքին մէջէն չանցնիր, հապա միայն մէկ կտորը . իսկ մնացած արիւննին շնչերակի արեան հետ խառնուելով՝ մարմնոյն մէջ կը պտըտի, առանց թոքերնուն մէջէն անցնելու : Եւրեան գնտակները թռչուններուն պէս ձուած են : Սողոմոնները ձուածին են, բայց իրենց հաւկիթներուն վրայ թուխս չեն նստիր . ոմանց հաւկիթն ալ իրենց փորերնուն մէջ կը բացուի :

Եւ դասը կը բաժնուի չորս կարգ :

ԳԽԱՍ Գ. Զուի :

Ձկներուն դասը ողնաւոր ձուածին են . ասոնց շնչառութիւնը ջրի մէջէն է . թոք չունին, թոքի տեղ՝ իրենց անկաճը այլեւայլ բլթակներ բաժնուած ըլլալով՝ ջուրը անոնց մէջ կը մտնէ, ու պէտք եղած շնչառութեան սնունդը անկէ կ'անցնի, արեան հետ կը բաղադրուի, և անկէ բոլոր մարմնոյն մէջ կը տարածուի :

Ձկները ամէնն ալ ընդհանրապէս ակռայ ունին, և իրենց կազմուածքը լողալու յարմար է : Դատերը իրենց ընդերաց մէջ պարկ՝ մը ունին օդով լեցուն, և ամէնն ալ լողալու մէյմէկ կերպ ունին . ոմանք քովընտի կը լողան, ոմանք փորերնուն վրայ, ոմանք միշտ դէպ'ի առաջ կ'երթան, ոմանք ալ ցատքըտելով կը բալեն :

Եւ դասն ալ ինը կարգ կը բաժնուի : Եւ ջի վեց կարգին տակը կ'իյ-

նան ոսկորոտ ձկները . իսկ ետեւի իրեքին տակը կ'իյնան աճառաւոր ձրկները :

Ուրիշ յօդուածով կը խօսինք մէկալ մասերուն վրայ ալ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Սկզբունք երկրագործութեան :

Գ

Բայտերու վրայ :

Հ. Բայտն ի՞նչ է .

Պ. Բայտ կ'ըսուի ան արարածը որ շարժելու կամ տեղը փոխելու կարողութիւն չունի, թէպէտ և կենդանեաց պէս գրեթէ կը ծնանի, կ'ապրի ու կը մեռնի . գետնէն ու օդուն մէջէն ծծած հիւթովը կը սնանի ու կը մեծնայ, և իրեն նման բոյսեր կ'արտադրէ : Եւ գործողութիւններս բոյսը իր գործարաններովը կ'ընէ . բայց ամէն բոյս նոյնչափ գործարան չունի . կապախալ ըսուած բոյսերը հինգ գործարան ունին, որ են արմատ, ջողան, րեխ, ծաղիկ, պտուղ : Եւսոյնցմէ առջի իրեքը սննդեան գործարաններ կ'ըսուին :

Հ. Ո՞րն է արմատը .

Պ. Բայտին վարի կտորն է որ հողուն մէջ խրած է . ասիկայ բոյսը գետնին վրայ հաստատուն բռնելու համար է . բարակ բարակ թելեր ունի որ մալճալէ կ'ըսուին, և աս մաղմղուկներուն սախգաձե ծայրերովը կը ծծէ բոյսը հողին մէջէն իրեն սննդարար հիւթը, որ բոյսին ամէն կողմը կը տարածուի, ու հոյլ¹ կ'ըսուի :

Հ. Ո՞րն է ջողունը .

Պ. Յողունը բոյսին արմատէն վեր եղած մասն է . և ասով միայն անկէ կը տարբերի որ հողէն դուրս ցցուած է,

1 Բեռ :

2 Իւլ :

3 Ֆիւլ :